



Արփինե ՍԱՐԳՍՅԱՆ

*ՀՀ արդարադատության նախարարության  
հասկանողության և քրեակարարողական քաղաքականության մշակման վարչության  
քրեակարարողական քաղաքականության մշակման բաժնի պետ,  
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի ասպիրանտ*

**ՊԱՏԻԺԸ ԿԱՏԱՐՈՂ ՏԻՄՆԱՐԿԻ ԿԱՍ ՄԱՐՄՆԻ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ, ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱՍ ԸՆԴՈՒՆԱԾ  
ՈՐՈՇՄԱՆ ԵԿԱՏՄԱՐԲ ԳԱՏԱԿԱՆ ՎԵՐԱՏՄԿՈՂՈՒԹՅԱՆ  
ՄԻ ԶԱՆԻ ՏԱՐՑԵՐ**

Անվիճելի է, որ իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցների մեկը դատական պաշտպանությունն է: Դատական պաշտպանության իրավունքից զատ՝ պակաս կարևոր չէ մաս այդ իրավունքի իրացման հստակ և արդյունավետ կառուցակարգի առկայության հանգամանքը:

Անդրադառնալով խոցելի խումբ համարվող անձանց՝ դատապարտյալների կողմից դատական պաշտպանության իրավունքի իրացման կառուցակարգի առկայության հարցին՝ ՀՀ Սահմանադրական դատարանի 2019 թվականի հունվարի 22-ի ՍԴՈ-1439 որոշմամբ (այսուհետ՝ նաև Որոշում) արձանագրվեց, որ մինչև Ազգային ժողովի կողմից Որոշմամբ արտահայտված առկա համակարգային իրավական անորոշության հաղթահարումը, քրեակատարողական հիմնարկի պաշտոնատար անձանց գործողությունների (անգործության) բողոքարկման հետ կապված գործերը ենթակա են քննության ՀՀ վարչական դատարանի կողմից, «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **քանի դեռ պատժի կատարման հետ կապված կոնկրետ գործի, նյութի կամ հարցի քննության իրավասությունն օրենքով հստակ վերապահված չէ քրեական գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանին**<sup>1</sup>:

Հաշվի առնելով ՀՀ Սահմանադրական դատարանի նշված որոշման

առանցքը կազմող դիտարկման գործնական նշանակությունը՝ սույն աշխատանքի շրջանակում քննարկման առարկա են դարձել հետևյալ հարցադրումները.

- պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի գործողության, անգործության կամ ընդունած որոշման դեմ բերված բողոքների քննությունը ո՞ր դատարանին պետք է ընդդատյա լինի,
- արդյո՞ք դատավորի մասնագիտացումն էական նշանակություն ունի պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի գործողության, անգործության կամ ընդունած որոշման դեմ բերված բողոքների արդյունավետ քննությունն ապահովելու տեսանկյունից,
- պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի գործողության, անգործության կամ ընդունած որոշման դեմ բերված բողոքները քննող դատարանն արդյո՞ք ունի անհրաժեշտ գործիքակազմ նշված բողոքների արդյունավետ քննությունն ապահովելու համար:

Այսպես, ՀՀ քրեակատարողական օրենսգրքի<sup>2</sup> 7-րդ և 18-րդ հոդվածները թեև ամրագրում են պատիժ կատարող հիմնարկի կամ մարմնի գործողության, անգործության կամ ընդունած որոշման դատական կարգով բողոք բերելու դատապարտյալի հնարավորությունը, այդուհանդերձ, չեն հստակեցնում վարչա-

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 9 - 10 (243-244)

**ԴԱՏԱԿԱՆ**  
*Իշխանություն*

կա՞ն, թե՞ ընդհանուր իրավասության դատարան կարող է դիմել դատապարտյալը: Սահմանադրական դատարանը, խնդրո առարկայի շուրջ համակարգային վերլուծության ենթարկելով «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 20-րդ, 21-րդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի<sup>3</sup> 41-րդ, 44-րդ և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածները, արձանագրել է, որ գործող օրենսդրությամբ բողոքը քննելու իրավասությամբ քրեական մասնագիտացված դատավորն ուղղակիորեն օժտված չէ՝ հաշվի առնելով այն, որ «Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը քրեական մասնագիտացման դատավորին ընդդատյա՝ պատժի կատարման հետ կապված գործերը որոշակիացնելու համար ընտրել է օրենքով հատուկ նախատեսված լինելու կանխատեսելի չափանիշը: Ըստ այդմ՝ այդպիսի գործերը ենթակա են քննության ՀՀ վարչական դատարանի կողմից, քանի դեռ բողոքի քննության իրավասությունն օրենքով հստակ վերապահված չէ քրեական գործեր քննող ընդհանուր իրավասության դատարանին:

Հասկանալու համար, թե գործնականում օրենսդիրը ո՞ր դատարանը կարող է դիտարկել բողոքը քննող պատշաճ դատարան՝ անհրաժեշտ է բացահայտել դատական վերահսկողության առարկա հանդիսացող հարաբերությունների էությունը:

ՀՀ ՔԿՕ «Դատական վերահսկողությունը» վերտառությամբ 18-րդ հոդվածի ուսումնասիրությունից բխում է, որ դատական վերահսկողության առարկան են կազմում՝

- 1) դատական որոշումն ի կատար ածելու հետ կապված հարցերը,
- 2) պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի վարչակազմի գործողությունների<sup>4</sup> դեմ դատական կարգով բերված բողոքների քննության հարցերը:

Հարկ է նկատել, որ նշված հոդվածը գետեղված է ՀՀ ՔԿՕ «Վերահսկողու-

թյունը և հսկողությունը պատիժները կատարելու նկատմամբ: Պատասխանատվությունը դատարանի դատավճիռը չկատարելու համար» վերտառությամբ 4-րդ գլխում: **Օրենսդիրը ՀՀ ՔԿՕ շրջանակում փաստում է, որ և՛ դատական որոշումն ի կատար ածելու հետ կապված հարցերը, և՛ պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի վարչակազմի գործողությունների դեմ դատական կարգով բերված բողոքների քննությունը պատժի կատարման գործընթացի բաղկացուցիչ մասն են՝** այդպիսով հանդիսանալով դատական վերահսկողության առարկա:

Չնայած օրենսդիրը ՀՀ ՔԿՕ շրջանակում ամրագրել է դատական վերահսկողության առարկա հանդիսացող վերոնշյալ երկու խումբ հարցերը, այդուհանդերձ ՀՀ ՔԴՕ շրջանակում ընդհանուր առմամբ կարգավորել է միայն դատական որոշումն ի կատար ածելու հետ կապված հարցերը: Սակայն այս ամենը չի նշանակում, որ ՀՀ ՔԴՕ-ն, համալիր կերպով չկարգավորելով բողոքի քննության կարգի հետ կապված հարաբերությունները, իսպառ բացառել է քրեական մասնագիտացված դատավորի կողմից բողոքի քննության հնարավորությունը:

Հիմնավորելու համար, որ պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի վարչակազմի գործողությունների, անգործության կամ ընդունած որոշման դեմ դատական կարգով բերված բողոքների քննությունը ևս հանդիսանում է պատժի կատարման հետ կապված հարց, բավական է միայն նշել, որ օրենսդիրը ՀՀ ՔԴՕ «Դատական որոշումների կատարումը» վերտառությամբ 49-րդ գլխում գետեղված 438-րդ հոդվածի 3.1-րդ մասի կարգավորման ուժով փաստում է, որ ՀՀ ՔԴՕ-ով սահմանված կարգով է քննվում, այսինքն՝ քրեական մասնագիտացված դատավորի իրավասությանն է վերապահված մաս ՀՀ ՔԿՕ 115-րդ հոդվածի 8-րդ մասով նախատեսված դեպքում դատապարտյալի կողմից ներկայացված բողոքը: ՀՀ ՔԿՕ 115-րդ հոդվածի 8-րդ մասն ամրագրում



է, որ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի՝ դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասնավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու հարցը դատարան չներկայացնելու մասին **որոշումը կարող է բողոքարկվել առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարան:**

Խնդրո առարկայի շրջանակում հարկ ենք համարում անդրադառնալ նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի թիվ ՇԴ-2/0007/15/12 գործով արտահայտած դիրքորոշմանը: Նշված գործով Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը և պատժի չկրած մասնավելի մեղմ պատժով փոխարինելը քրեաիրավական ինստիտուտներ են, որոնք կարգավորվում են ՀՀ քրեական օրենսգրքի<sup>5</sup> 76-րդ և 77-րդ հոդվածներով: Այդ ինստիտուտների կիրառման կարգն ու պայմանները նախատեսված են ՀՀ ՔԴՕ-ով և ՀՀ ՔԿՕ-ով՝ որպես դատական ակտն ի կատար ածելիս ծագող հարցեր: Այլ խոսքով՝ պատժից պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասնավելի մեղմ պատժով փոխարինելու հետ կապված իրավահարաբերություններն իրենց բնույթով քրեաիրավական են, հետևաբար ենթակա են լուծման ՀՀ ՔԴՕ-ով սահմանված կարգով՝ դատապարտյալի պատիժը կրելու վայրի դատարանի կողմից<sup>6</sup>: ՀՀ Վճռաբեկ դատարանն ընդգծում է, որ. «... քննարկվող [պատժից պայմանական վաղաժամկետ ազատելը և պատժի չկրած մասնավելի մեղմ պատժով փոխարինելը] քրեաիրավական ինստիտուտի գործադրման ընթացքում դատապարտյալի պատիժը կրելու վայրի դատարանի իրավասությունները չեն սահմանափակվում միայն դատարան ներկայացվող միջնորդությունները լուծելով: Մասնավորապես, ՀՀ ՔԿՕ 115-րդ հոդվածը սահմանում է որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված ան-

ձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման կամ պատժի չկրած մասնավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման կարգը, որի ընթացքում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմին վերապահված է որոշակի գործողություններ կատարելու և որոշումներ կայացնելու իրավասություն: Այս առումով պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի իրավասությանը վերապահված գործողություններն ու որոշումները հանդիսանում են պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասնավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու քրեաիրավական ինստիտուտի գործադրման համար անհրաժեշտ տարրեր, հետևաբար դրանք նույնպես բխում են քրեաիրավական հարաբերություններից, և դրանց դեմ բերված բողոքները ենթակա են քննության քրեաիրավական նորմերի կիրառմամբ: Ընդ որում՝ չնայած որ այս դեպքում մասնավոր անձը (դատապարտյալը) վիճարկում է վարչական մարմնի՝ իր շահերին առնչվող որոշման կամ գործողության օրինականությունն ու հիմնավորվածությունը, այդուհանդերձ, տվյալ վեճը չի կարող համարվել հանրային իրավահարաբերություններից բխող այնպիսի վեճ, որի լուծումն ընդդատյա է վարչական դատարանին: Քրեաիրավական հարաբերությունները նույնպես հանրային իրավահարաբերությունների տեսակ են, սակայն այս դեպքում շահագրգիռ անձի բողոքի քննարկման և լուծման իրավասությունն օրենսդրորեն վերապահված է ընդհանուր իրավասության (քրեական) դատարանին և դուրս է վարչական դատարանի իրավասության շրջանակներից:»<sup>7</sup>:

Վճռաբեկ դատարանի նշված որոշման համալիր ուսումնասիրությունից հետևում է, որ.

- 1) քրեաիրավական հարաբերությունները հանրային իրավահարաբերությունների տեսակ են,
- 2) հանրային իրավահարաբերու-

քյուններից ծագող ցանկացած վեճ չէ, որ ընդդատյա է վարչական դատարանին,

3) պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի իրավասությանը վերապահված գործողություններն ու որոշումները հանդիսանում են քրեաիրավական ինստիտուտի գործադրման համար անհրաժեշտ տարրեր, հետևաբար, դրանք նույնպես բխում են քրեաիրավական հարաբերություններից,

4) պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի իրավասությանը վերապահված գործողությունների ու որոշումների դեմ բերված բողոքները ենթակա են քննության քրեաիրավական նորմերի կիրառմամբ:

Չարգացնելով Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշմամբ արտահայտված դիրքորոշումը՝ մենք այն համոզմանն ենք, որ պատժի կատարման հետ կապված ցանկացած հարց, ըստ էության, բխում է քրեաիրավական առանցքային ինստիտուտներից մեկից՝ պատժից: Պատժի նշանակմամբ սկիզբ է դրվում քրեաիրավական հարաբերություններից բխող նոր՝ քրեակատարողական հարաբերություններին, որոնցից բխող բոլոր գործողություններն ուղղակիորեն կամ անուղղակիորեն բխում են պատժից, որա նշանակման փաստից, պատժի կրման կարգից և պայմաններից: Հետևաբար, պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի վարչակազմի գործողությունը, անգործությունը կամ ընդունած ակտը չի կարող պատժի կատարումից առանձին դիտարկվել: Ըստ այդմ՝ դրանց դեմ բերված բողոքները չեն կարող ենթակա լինել վարչական դատարանին:

Նշվածից բացի՝ հարկ է նկատել, որ բողոքի քննությունը վարչական դատարանին վերապահելը կարող է խնդրահարույց լինել քրեաիրավական նորմերի կիրառման և դրանց՝ վարչական դատարանի կողմից մեկնաբանության ենթարկելու տեսանկյունից: Խնդիրն առավել պատկերավոր ներկայացնելու համար բերենք մի օրինակ:

Դիցուք, վարչական դատարանը քննության է ենթարկում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի գործողության դեմ դատապարտյալի բերած բողոքն այն մասին, որ պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը սխալ է հաշվարկել ՀՀ ՔՕ 76-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ պատժի ժամկետի փաստացի կրած մասը և ըստ այդմ՝ ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական և պրոբացիայի ծառայություններին ակնկալվող ժամկետից ավելի ուշ է ծանուցել ՀՀ ՔՕ 76-րդ հոդվածի 1.1-ին և 1.2-րդ մասերով նախատեսված հանգամանքների վերաբերյալ գեկույց ներկայացնելու մասին: Դատապարտյալը պնդում է, որ իր մոտ առկա է հանցագործությունների համակցություն, որի մաս են կազմում ոչ մեծ ծանրության և ծանր հանցագործություններ, որոնցից մեկի՝ ոչ մեծ ծանրության հանցագործության դեպքում օրենսդիրը պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հնարավորություն է նախատեսում փաստացի նշանակված պատժի ոչ պակաս, քան մեկ երրորդը կրելուց հետո, իսկ ծանր հանցագործության համար՝ փաստացի նշանակված պատժի ոչ պակաս, քան կեսը կրելուց հետո:

Բողոքի էությունից բխում է, որ վարչական դատարանը պետք է պատասխանի հետևյալ երկու հարցադրումներին.

1) հանցագործությունների համակցության դեպքում ինչպե՞ս են կիրառվում ՀՀ ՔՕ 76-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված կանոնները, այսինքն՝ ո՞ր կանոնով է հաշվարկվում փաստացի կրած պատժի ժամկետը.

2) արդյո՞ք պատիժը կատարող հիմնարկի վարչակազմը ճիշտ է հաշվարկել դատապարտյալի պատժի կրած ժամկետը և, ըստ այդմ, արդյո՞ք ճիշտ ժամկետում է ծանուցել ՀՀ արդարադատության նախարարության երկու ծառայություններին:

Անվիճելի է, որ ներկայացված երկրորդ հարցադրմանը պատասխանելու

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 9 - 10 (243-244)

**ԴԱՏԱԿԱՆ**  
*Իշխանություն*



համար վարչական դատարանը պետք է ուսումնասիրի առաջին հարցադրման հիմքում ընկած օրենսդրական կարգավորումները և որոշի կիրառման ենթակա կանոնը: Այս համատեքստում հարկ է նկատել, որ օրենսդիրը չի լուծել հանցագործությունների համակցության դեպքում ՀՀ ՔՕ 76-րդ հոդվածի 3-րդ մասով ժամկետների կիրառման հարցը: Ստացվում է, որ վարչական դատարանն իր ակտով պետք է վերլուծի և մեկնաբանի քրեաիրավական ինստիտուտներից մեկի՝ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման դեպքում օրենսդրի կողմից սահմանված ժամկետները հանցագործությունների համակցության դեպքում կիրառելու կարգը՝ այդպիսով քրեաիրավական ինստիտուտի կիրառման համար ձևավորելով որոշակի պրակտիկա, և դա այն դեպքում, երբ վարչական դատարանը, ըստ էության պետք է քննեք պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի գործողության դեմ բերված բողոքը՝ հաստատելով դրա իրավաչափ կամ ոչ իրավաչափ լինելը: Այլ կերպ՝ **հաշվի առնելով գործնականում պատիժը կատարող հիմնարկի վարչակազմի գործողության, անգործության կամ ընդունած որոշման դեմ բերված բողոքների բազմազանությունը՝ վարչական դատարանը չի կարող խուսափել քրեաիրավական նորմերի մեկնաբանության հանգամանքից, քանի որ բողոքարկվող գործողությունը, անգործությունը կամ ընդունած որոշման իրավաչափությունը գնահատելու համար վարչական դատարանը չի կարող համալիր քննարկման առարկա չդարձնել վարչակազմի կողմից կիրառած կամ կիրառման ենթակա իրավակարգավորումները:** Նման պրակտիկան գործնականում կարող է առաջացնել դժվարություններ և հակասություններ, մասնավորապես՝ **վարչական դատարանը, չլինելով քրեական գործերով մասնագիտացված դատարան, կարող է մեկնաբանել քրեաիրավական տարբեր ինստիտուտներին վերաբերող իրավակարգավորումները,**

**որոնք կարող են տարբեր լինել նույն քրեաիրավական մասնագիտացված դատարանների տրված մեկնաբանություններից՝ հանգեցնելով երկու դատարանների միջև գործառույթների ոչ հստակ տարանջատմանը, գործառույթների որոշ բաղադրիչների կրկնությանը և, վերջիվերջո, նորմերի մեկնաբանության և դրանց կիրառության տեսանկյունից ոչ կայուն պրակտիկայի ձևավորմանը:**

Վերոգրյալի հաշվառմամբ, գտնում ենք, որ բողոքը ենթակա է քննության առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից: Հիմքում ունենալով պատժի կատարման հետ կապված գործերը որոշակիացնելու համար օրենքով հատուկ նախատեսված լինելու կանխատեսելի չափանիշը՝ **անհրաժեշտ է ՀՀ ՔԳՕ 41-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ դատարանի լիազորությունների ցանկը լրացնել դատարանի նոր՝ պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի գործողության, անգործության կամ ընդունած որոշման դեմ բողոքները քննելու և լուծելու լիազորությամբ:**

Ինչպես նշեցինք, բողոքի քննության հարցում կարևոր նշանակություն ունի դատարանի մասնագիտացված լինելու հանգամանքը: Չփերագնահատելով քրեական գործերով մասնագիտացված դատավորի դերն ու նշանակությունը բողոքի քննության հարցում՝ այդուհանդերձ, մենք այն համոզմանն ենք, որ պատժի կատարման հետ կապված հարցերը՝ ընդհանրապես, բողոքի քննությունը՝ մասնավորապես, քրեաիրավական հարաբերություններից ծագող քրեակատարողական հարաբերությունների բաղկացուցիչ մաս հանդիսանալով, ունեն իրենց առանձնահատկությունները, որոնք քրեական մասնագիտացված դատավորի համար գործնականում կարող են առաջացնել մի շարք դժվարություններ: Պատժի կատարման հետ կապված հարցերը քրեական գործերով մասնագիտացված դատավորի համար ունեն քրեական գործերից ածանցյալ բնույթ և քրեական գործե-

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 9 - 10 (243-244)

**ԴԱՏԱՎԱՆ**  
Իշխանություն

րի քննության հիմնական գործառնությունների ֆունկցիաներն ստանում են հետևյալից՝ երկրորդային պլան:

Հենց այդ պատճառով էլ և՛ տեսական գրականության մեջ, և՛ միջազգային փորձում առաջ է քաշվել պատժի կատարման հետ կապված հարցերով (քրեակատարողական հարցերով) մասնագիտացված դատավոր ունենալու գաղափարը:

Այսպես, դեռևս 20-րդ դարի երկրորդ կեսին Մարկ Անսելը պնդում էր, որ պատժի կատարման հետ կապված հարցերով մասնագիտացված դատավորի ինստիտուտը քրեակատարողական իրավունքի գիտության զարգացման համար էթե ոչ վերջնական արդյունք է, ապա առնվազն զարգացման կարևոր փուլ, որը Ֆրանսիայում և այլ երկրներում սոցիալական պաշտպանության նոր գաղափարախոսության ազդեցության ներքո ձգտում է ամրապնդել և ամրապնդել պատժի կատարումը և ապահովել դատարանի մասնակցությունը պատժի կատարման նկատմամբ վերահսկողությանը<sup>8</sup>:

Պատահական չէ, որ Մարկ Անսելը շեշտում է **Ֆրանսիայի** օրինակը, բանի որ զարգացման մեծ ճանապարհ անցնելով՝ ֆրանսիական գործող օրենսդրությունը բավականին լայն լիազորություններ է վերապահում պատժի կատարման հետ կապված հարցերով մասնագիտացված դատավորին: Ստանալով տարեկան հարյուրյուն քրեակատարողական հիմնարկներում ազատությունից զրկված անձանց տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման վերաբերյալ, տեղյակ լինելով նրանց նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերին, իրազեկվելով քրեակատարողական հիմնարկում տեղի ունեցած ցանկացած լուրջ միջադեպի մասին՝ մասնագիտացված դատավորը հնարավորություն ունի խորությամբ ուսումնասիրելու քրեակատարողական հիմնարկներում առկա իրավիճակը, գնահատելու դրանում կատարվող փոփոխությունները, մանրագին ուսումնասիրելու ազատությունից զրկված անձանց վար-

քագիծը և այլն:

**Գերմանիայում** պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի որոշումները կարող են բողոքարկվել դատական կարգով՝ բողոքը ներկայացնելով քրեակատարողական պալատ:

Բավականին ակտիվ դերակատարմամբ է օժտված նաև **Լեհաստանի** պատժի կատարման հետ կապված հարցերով մասնագիտացված դատավորը: Լեհաստանի քրեակատարողական օրենսգրքի համաձայն՝ պատժի կատարման հետ կապված հարցերով մասնագիտացված դատավորին են վերապահված այնպիսի հարցերի լուծումը, ինչպիսին օրինակ դատապարտյալին կարճաժամկետ մեկնում տրամադրելն է, նրան մեկուսարանում պահելը, նրա նկատմամբ կարգապահական տույժ նշանակելու մասին որոշման վերացումը կամ փոփոխումը և այլն: Լեհաստանում պատժի կատարման հետ կապված հարցերով մասնագիտացված դատավորին վերապահված լիազորությունների ուսումնասիրությունը վկայում է այս ինստիտուտի կարևորության մասին: Թ. Քալիշը նշում է, որ օրենսդիրն ընդունել է քրեակատարողական հիմնարկների նկատմամբ վերահսկողության այսպիսի «բաց բանաձև», որով անհրաժեշտ է մշտադիտարկման ենթարկել և գնահատել ոչ միայն ձևական տարրերը, այլև նյութական բնույթի խնդիրները՝ վերահսկողությունը տարածելով բոլոր զգայուն հարցերի նկատմամբ<sup>9</sup>:

Մասնագիտացված դատավոր կամ դատարան ունենալու միջազգային չափանիշների համապատասխան՝ Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհրդի գնահատմամբ **մասնագիտացված դատավորներ կամ դատարաններ պետք է առանձնացվեն՝ բացառապես օրենքի կամ փաստերի բարդության կամ առանձնահատկությամբ պայմանավորված, և ըստ այդմ՝ արդարադատության պատշաճ իրականացմամբ**<sup>10</sup>: Նշվածը համադրելով ՀՀ-ում պատժի կատարման հետ կապված հարցերի առնչությամբ

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2019 9 - 10 (243-244)

ԴԱՏԱԿԱՆ  
Իշխանություն



առկա իրավիճակի հետ՝ հարկ է առանձնացնել հետևյալը.

1) Պատժի կատարման նկատմամբ դատական վերահսկողության առարկան բավական լայն է և առանձնահատուկ՝ ընդգրկելով պատժի կատարմանն առնչվող կազմակերպական հարցերից մինչև անձի հիմնարար իրավունքներ և ազատություններ:

2) ՀՀ-ում ընթացող դատաիրավական բարեփոխումները միտված են նրան, որ պատժի կատարման հետ կապված հարցերի լուծումը չի դիտարկվելու քրեական դատավարության մաս: ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքից հանվել է պատժի կատարման հետ կապված հարցերի կարգավորումը՝ դրանք թողնելով ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի նախագծի կարգավորմանը: Ըստ այդմ՝ ավելի է ընդգծվում քրեակատարողական հարցերով մասնագիտացված դատավոր ունենալու անհրաժեշտությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմքում ունենալով պատժի կատարման նկատմամբ դատական վերահսկողության արդյունավետության բարձրացումը՝ գտնում ենք, որ **պատժի կատարման հետ կապված հարցերով մասնագիտացված դատավոր ունենալը գործնականում հնարավորություն կտա այդպիսի մասնագիտացում ունեցող դատավորին առավել խորությամբ ուսումնասիրել քրեակատարողական ոլորտը և տիրապետել ոլորտային առանձնահատկություններին:** Թվարկվածները մասնագիտացված դատավորին թույլ կտան առանց դժվարությունների բացահայտել կոնկրետ դեպքով օբյեկտիվ իրականությունը և կայացնել անաչառ որոշում: Ինչպես իրավացիորեն նշում է Վ. Ի. Ռոտմևը, մասնագիտացված դատավորի ինստիտուտի ներդրումը գործնականում կնպաստի պատիժը կատարող հիմնարկում կամ մարմնում հոգեբանական մթնոլորտի փոփոխմանը, քանի որ մասնագիտացված դատավորը կընկալվի որպես քաղաքացու իրավունքների և ազատությունների

պաշտպանությամբ զբաղվող պետական մարմնի ներկայացուցիչ, ինչպես նաև կխթանի դատապարտյալների մոտ իրավական գիտակցությունը և նրանց մոտ այն համոզմունքի ձևավորմանը, որ վեճերը ենթակա են լուծման բացառապես իրավական ճանապարհով<sup>11</sup>: Թ. Քալիշն իր հերթին պնդում է, որ չափազանցրած չենք լինի, եթե ասենք, որ քրեակատարողական հարցերով մասնագիտացված դատավորը մշակում է քրեակատարողական հիմնարկի քաղաքականությունը՝ ձևավորելով համապատասխան մշակույթ:

Մասնագիտացումից բացի՝ պատժի կատարման հետ կապված հարցեր քննող դատավորը պետք է օժտված լինի անհրաժեշտ գործիքակազմով, որի շնորհիվ հնարավոր կլինի կոնկրետ գործով տալ իրավական պատշաճ գնահատական:

Այսպես, ՀՀ ՔԴՕ 49-րդ գլխի համալիր ուսումնասիրությունից բխում է, որ պատժի կատարման հետ կապված հարցերի քննության ժամանակ դատարանը մնում է «պասիվ» կարգավիճակում՝ բավարարվելով միայն ներկայացված ապացույցների հետազոտմամբ և դատական նիստին ներկա անձանց կարծիքները լսելով: Սակայն արդյո՞ք այսպիսի կարգավիճակը անհրաժեշտ է և բավարար պատժի կատարման հետ կապված հարցերի, մասնավորապես՝ պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի գործողության, անգործության կամ ընդունած որոշման դեմ բերված բողոքի քննության հարցում:

Տեսական գրականության մեջ որոշ դատավարագետների կարծիքները հանգում են նրան, որ անկախ և անաչառ դատարանի առջև դատավարության երկու կողմերն էլ իրավահավասար են և ունեն հնարավորություն հիմնավորելու իրենց ներկայացրած դիրքորոշումը և առարկելու մյուս կողմի ներկայացրած դիրքորոշմանը՝ այդպիսով մերժելով դատարանի «ակտիվությունը»<sup>12</sup>: Դրան զուգահեռ, տեսական գրականության մեջ առկա

է կարծիք այն մասին, որ կողմերի դատավարական իրավահավասարությանը հանդերձ՝ դատական քննության ընթացքում կարևոր է դատարանի ակտիվ դերի պահպանման նշանակությունը: Ի վերջո դատական ճանաչման բանալին գտնվում է դատարանի ձեռքում<sup>13</sup>:

Մենք այն համոզմանն ենք, որ պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի գործողության, անգործության կամ ընդունած որոշման դեմ բերված բողոքի քննության շրջանակներում ակնհայտ է **հանրային իրավահարաբերության մասնակիցների իրական անհավասարությունը**: Ավաճը հիմնավորվում է նրանով, որ բողոքի քննության համար անհրաժեշտ ապացույցները, որպես կանոն, գտնվում են պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի տիրապետության տակ, որը շահագրգռված չէ դրանք ներկայացնելու դատարանին:

Դիցուք, դատապարտյալը բողոք է ներկայացրել պատիժը կատարող հիմնարկի անգործության դեմ՝ պնդելով, որ պատիժը կատարող հիմնարկը դատապարտյալին չի տրամադրել պատշաճ բժշկական օգնություն և սպասարկում: Պատշաճ բժշկական օգնություն և սպասարկում տրամադրված լինելու կամ չտրամադրելու փաստը հաստատվում է դատապարտյալի բժշկական քարտում կատարված գրառումների միջոցով, որը գտնվում է պատիժը կատարող հիմնարկի տիրապետության տակ: Ստացվում է, որ անհրաժեշտության դեպքում դատարանը չի կարող պատիժը կատարող հիմնարկից պահանջել դատապարտյալի բժշկական քարտը՝ հաշվի առնելով այն, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նշված գլխի ուժով օրենսդիրն ուղղակիորեն դատարանի համար չի նախատեսել մանկ լիազորություն:

Արդյունքում՝ **դատարանի «պասիվ» կարգավիճակը և վկայակոչած հանգամանքը ազատությունից զրկված անձին**

**ընդհանուր առմամբ զրկում է պետական մարմնի (տվյալ դեպքում՝ պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի) դեմ համարժեք պաշտպանության հնարավորությունից:**

Վերոգրյալը հիմք է տալիս պնդելու, որ բողոքի քննության դեպքում դատարանը պետք է ունենա ակտիվ դերակատարում: Մի կողմ թողնելով բողոքի քննության կառուցակարգի բացակայության հանգամանքը, ինչն ինքնին խնդրահարույց է և չի երաշխավորում դատական պաշտպանության իրավունքի իրացման դատավարական հիմքը՝ գտնում ենք, որ պատիժների կատարմանն առնչվող հարցերի քննության շրջանակներում պետք է ամրագրվի դատարանի կողմից «ex-officio» սկզբունքին համահունչ գործելու հնարավորությունը: Այլ կերպ՝ պատիժների կատարման հետ կապված հարցերի քննության շրջանակում դատարանը պետք է հնարավորություն ունենա ի պաշտոնե պարզելու բողոքի քննությանն առնչվող հանգամանքները, սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ պահանջելու և ստանալու բողոքին վերաբերելի բոլոր ապացույցները՝ չմնալով պասիվ դիտորդի և կողմերի վեճը կարգավորողի դերում: Արդյունքում՝ **ազատությունից զրկված անձին կարվի պետական մարմնի (տվյալ դեպքում՝ պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի) դեմ համարժեք պաշտպանության հնարավորություն, ինչպես նաև կերաշխավորվի բողոքի օբյեկտիվ քննությունը:**

Ամփոփելով վերոգրյալը՝ նշենք, որ **քրեակատարողական հարցերով մասնագիտացված և դատավարության ընթացքում ակտիվ կարգավիճակով օժտված դատավորը ունակ է ապահովելու դատապարտյալների արդյունավետ դատական պաշտպանությունը և լինելու նրանց խախտված իրավունքների վերականգնման երաշխավորը:**





## Քրեական դատավարություն

- 1 Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 2019 թվականի հունվարի 22-ի ՍԳՈ-1439 որոշումը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 41-րդ հոդվածի և «Գատական որոշումների կատարումը» վերտառությամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ գլխում ընդգրկված նորմերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով, կետ 4.6:
- 2 Այսուհետ՝ ՀՀ ԲԿՕ:
- 3 Այսուհետ՝ ՀՀ ԲԴՕ:
- 4 Հաշվի առնելով այն, որ սույն աշխատանքի շրջանակում անդրադարձ չենք կատարելու սույն կետում նշված բողոքների բոլոր տեսակներին, պարզապես նշենք, որ այս կետում բաց են մնացել պատիժը կատարող հիմնարկի կամ մարմնի վարչակազմի անգործության, ինչպես նաև ընդունած որոշման դեմ բերված բողոքների քննությունը: Այդուհանդերձ, հարկ է փաստել, որ վերջիններս գործնականում ևս դիտարկվում են դատական վերահսկողության առարկա և ենթակա են քննության:
- 5 Այսուհետ՝ ՀՀ ԲՕ:
- 6 Տե՛ս Արթուր Այվազյանի վերաբերյալ թիվ ՇԳ-2/0007/15/12 գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2013 թվականի սեպտեմբերի 13-ի որոշումը, կետ 19:
- 7 Տե՛ս նույն տեղում, կետ 20:
- 8 Տե՛ս **Марк Ансель**. Новая социальная защита (гуманистическое движение в уголовной политике). Под ред. А.А. Пионтковского. Москва, изд-во «Прогресс», 1970, с. 217.
- 9 Տե՛ս **Tomasz Kalisz**, Penitentiary supervision - the Polish model of ensuring the legal and correct performance of imprisonment, NOWA KODYFIKACJA PRAWA KARNEGO. Tom XXXVI AUWr No 3631, Wrocław 2014.
- 10 Տե՛ս Consultative Council of European Judges (CCJE), Opinion (2012) No 15. of the Consultative Council Of European Judges On The Specialisation Of Judges, adopted at the 13th plenary meeting of the CCJE (Paris, 5-6 November 2012), Conclusions, point 3.
- 11 Տե՛ս Руднев В.И., Пенитенциарный судья. К вопросу о судебном контроле за исполнением наказаний, «Российская юстиция», 2001, № 8, с. 13.
- 12 Տե՛ս Боннер А.Т., Квитин В.Т., Судебный контроль в области государственного управления, Москва, 1973, с. 23.
- 13 Ավելի մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն: Հատուկ մաս /Գազինյան Գ. Ս. և ուրիշ, 4-րդ հրատարակություն, լրացումներով և փոփոխություններով, Եր., ԵՊՀ հրատ., 2019, էջ 460:

## RESUME - РЕЗЮМЕ

### SOME ISSUES ON JUDICIAL SUPERVISION OVER THE ACTION, INACTIVITY OR DECISION TAKEN BY THE INSTITUTION OR THE BODY EXECUTING THE SENTENCE

A. Sargsyan

*Head of Penitentiary Policy Development Division  
Of Anti-Corruption and Penitentiary Policy Development Department,  
Ministry of Justice of the Republic of Armenia  
PhD student at YSU Law Faculty, Chair of Criminal Law*

Article is devoted to the judicial supervision over the action, inactivity or decision taken by the institution or the body executing the sentence. The author has raised and analyzed some of the key issues related to the subject matter and presented suggestions for their solution: within the framework of the article, the jurisdiction of the complaints against the action, inactivity or decision taken by the institution or body executing the sentence, the judge's expertise and the available tools for the examination of such complaints were discussed.

**Keywords:** *prisoner, judicial protection, judicial supervision, jurisdiction, a judge specialized in penitentiary matters, ex-officio principle.*

### НЕСКОЛЬКО ВОПРОСОВ О СУДЕБНОМ НАДЗОРЕ ЗА ПРИНЯТЫМ РЕШЕНИЕМ, ДЕЙСТВИЕМ ИЛИ БЕЗДЕЙСТВИЕМ УЧРЕЖДЕНИЯ ИЛИ ОРГАНА ИСПОЛНЕНИЯ НАКАЗАНИЯ

A. Саргсян

*Начальник отдела развития пенитенциарной политики  
Департамента развития антикоррупционной и пенитенциарной политики  
аппарата Министерства юстиции РА,  
аспирант кафедры уголовного права ЕГУ*

Научная работа посвящена анализу процесса осуществления судебного надзора за принятым решением, действий или бездействия учреждений или органов исполнения наказания. В статье проанализированы основополагающие проблемы, касающиеся предмета обсуждения, предложены соответствующие решения. В рамках данной статьи рассмотрены вопросы юрисдикции жалоб, обжалования решений, действий или бездействия учреждения или органа исполнения наказания, а также вопросы, касающиеся необходимой специализации и наличия соответствующих инструментов у судьи.

**Ключевые слова:** *осужденные, судебная защита, судебный надзор, юрисдикция, специализированный судья по уголовному правосудию, принцип ex-officio.*

**Բանալի բառեր** - *նախապարտյալ, նախական պաշտպանություն, նախական վերահսկողություն, ընդհատություն, քրեակարարողական հարցերով մասնագիտացված նախավոր, «ex-officio» սկզբունք:*

**Ա. Սարգսյան** - ՀՀ արդարադատության նախարարության հավակնոտացիոն և քրեակատարողական բաղաբականության մշակման վարչության քրեակատարողական բաղաբականության մշակման բաժնի պետ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի սապիրանտ, էլ. փոստ՝ arpisargsyan@yahoo.com

Ներկայացվել է խմբագրություն՝ 25.09.2019, ստվել է գրախոսության՝ 25.09.2019, երաշխավորվել է իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Հ. Խաչիկյանի կողմից, ընդունվել է տպագրության՝ 24.10.2019